



ՍՏ. ԼԻՍԻՑԿԱՆԻ „ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՐՑԱՐԱՆ“-Ը*)



այ ազգագրության պատմության մեջ, նախքան պրոֆ. Ստ. Լիսիցյանի «Ազգագրական հարցարան»-ը լույս տեսնելը, մեզ հայտնի է երկու շրջադարձային մոմենտ: Առաջինը 1870-ական թվականներին Գ. Սրվանձտյանի «Գրոց ու Բրոց»-ի հրապարակ գալն է, երկրորդը՝ 80-ական թվականներին Գր. Խալաթյանի «Ծրագիրը»:

Մինչև Սրվանձտյանը մեր ազգագրությունը խարխալումների մեջ էր և պարզապես մինչև այդ մենք իսկական ազգագրություն էլ չենք ունեցել: Ամեն բան կրել է պատահական բնույթ և սուբեկտիվիզմը նկարագրական ազգագրության բնագավառում եղել է միակ իշխող ձևը:

Գ. Սրվանձտյանն այն վիտեռանն էր, որ ազգագրությունը գիտական ուղիների վրա դրեց: Նրա «Գրոց ու Բրոց»-ը հենց այդ նըպատակին էր ծառայում իր հրատարակման (1874) օրից մինչև Գ. Խալաթյանի «Ծրագիր» հանդես գալու: «Գրոց ու Բրոց»-ը ազգագրագետ Սրվանձտյանի ձեռքով գրված այն նախածրագիրն էր, որից, ըստ հեղինակի, պետք է օրինակ վերցնեին բոլոր ազգագրագետները և ֆոլկլորիստները: Սակայն, 1870 թվականներին հայ իրականության մեջ «Գրոց ու Բրոց»-ը անթերի ծրագիր լինել չէր կարող, որովհետև նախորդող նման փորձ չկար, իսկ եվրոպական փորձը դեռևս տալիս էր անծանոթ էր Արևմտահայաստանի ազգագրագետներին: Նրա թերությունն այն էր, որ առաջադրվող հարցերը սխառեմի էին վերածված և հրամցվող «հարցարանի» մեջ ի մի էին ձուլվել նաև հեղինակի տրված պատասխանները: Ծրագիրն ու նկարագիրը հանդես էին գալիս միաձուլվ կերպով: Այնուամենայնիվ, հեղինակն իր նպատակին հասավ այն տեսակետից, որ նրան հետևեցին տասնյակ բանահավաքներ և մեկը մյուսի հետևից

լույս ընծայվեցին բավականին հետաքրքրաշարժ ժողովածուներ:

19-րդ դարի վերջերին ազգագրության զարգացման պահանջները խիստ մեծացան հենց Գարեգին Սրվանձտյանի «Գրոց ու Բրոց»-ի և նրա մյուս ժողովածուների, ինչպես նաև նրա անմիջական ազդեցության տակ լույս տեսած այլ նկարագրությունների ազդեցության շնորհիվ: Գ. Սրվանձտյանին ուղղված նամակներից մեկում Գր. Խալաթյանը չէր թաղցնում, որ ապագա «Ծրագիր» շարժառիթը նրա գործերն էին հանդիսանում:

Բացի Արևմտահայաստանում տեղի ունեցող ազգագրական փորձերից, Արևելահայաստանում էլ այդ ժամանակները սկսվեցին նույնպիսի փորձեր, սակայն, նմանապես տարբերայնորեն:

Այդ տարբերայնությունը ներել չէր կարող Մոսկվայի կազարյան ճեմարանի պրոֆեսոր Գրիգոր Խալաթյանն այն պարագայում, երբ նա ականատես էր այն հոյակապ աշխատանքին, որ կատարում էր Եվրոպական և ռուսական ազգագրությունը, ոչ միայն լույս ընծայելով ազգագրական նկարագրությունները, այլև ուսումնասիրելով և պատմականորեն վերլուծելով աշխարհի շատ ու շատ ազգերի, ինչպես և նախնադարյան վիճակն ապրող ժողովուրդների ու ցեղերի կյանքը՝ ազգագրության միջոցով: Այդ կապակցությամբ 1887-ին Գ. Խալաթյանը Մոսկվայում լույս ընծայեց «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների» վերնագրով շատ շահեկան աշխատությունը, որը կատարելապես գիտական բնույթի ծրագիր էր և ժամանակի տեսակետից անփոխարինելի: Այդ ծրագիրն իր կենսունակությունը չկորցրեց մինչև Հայաստանի սովետացումը: Դրանով առաջնորդվում էին գրեթե բոլոր հայ ազգագրագետներն ու բանահավաք ֆոլկլորիստները:

Այս «Ծրագիրը» Գ. Սրվանձտյանի «Գրոց

*) Ստ. Լիսիցյան, Ազգագրական հարցարան, Սբկան, 1946 թ.

ու Բրոց»-ի մի նոր, իսկական գիտական փուլն էր: Նրա անմիջական ցուցմունքներով ընթացավ 1890-ական թվականներին կազմակերպված «Ազգագրական հանդէս»-ի խմբագրութունը և հետագայում Հայ Ազգագրական Ընկերութունը, մեծ ազգագրագետ երվանդ Լալայանի գլխավորությամբ: Բազմաթիվ ինտելիգենտներ գյուղական միջավայրերում հալաթյանի «Ծրագրով» առաջնորդվելով դարձան ազգագրության անխոնջ մըշակներ, գրի առան և հավիտենական կորստից փրկեցին մեր ժողովրդի մահացման ենթակա հին սովորություններն ու կենցաղը: Բայց Գ. Խալաթյանը, ինչպես և նրա նախորդ Գ. Սրվանձտյանը ապրելով հասարակական այնպիսի պայմաններում, ինչպիսին էին ռուսական կիսաճորտատիրական և և թյուրքական ավատական-բռնապետական կարգերը, իրենց հարցադրանքներով չէին կարող այսօրվա՝ սովետական կարգերը ապրող ազգագրագետների պահանջները բավարարել: Խալաթյանի ժամանակվա ազգագրության բռնած գիրքը այսօր շատ պարագաներում անընդունելի է: Ուստի շատ պատճառաբանված էր ու ժամանակին, երբ Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի հրատարակությամբ վերջերս լույս տեսավ այժմ միակ նշանավոր հայ ազգագրագետ և գիտության վաստակավոր գործիչ պրոֆ. Ստ. Լիսիցյանի «Ազգագրական հարցարան»-ը: Այս «Հարցարան»-ը բաղկացած է տասը գլխավոր բաժիններից՝ անտեսական կենցաղ, նյութական մշակույթ, սոցիալական հարաբերություններ, հավատալիքներ և այլն: Միատեմավորման տեսակետից այն իրենից ներկայացնում է միանշանակ ժամանակակից գիտական պահանջներին բավարարող հարցարան, որը կազմելու ժամանակ հեղինակը ձեռքի տակ է ունեցել հայկական և ռուսական ազգագրական մի շարք համապատասխան ծրագրեր ու այլ աղբյուրներ, ինչպես և օգտագործել է իր բազմամյա ազգագրագետի բեղմնավոր փորձը: Գր. Խալաթյանի «Ծրագրի» հրապարակումից հետո ամբողջ վաթսուն տարի հայ ազգագրագետներն ու այդ ուղղությամբ զբաղվող մասնագետները հրապարակի վրա ուրիշ ծրագիր չեն տեսել: Քաղաքի մասնագետ ազգագրագետների համար Խալաթյանի «Ծրագիրը» դուրսին էր օգտագործել, բայց մենք նկարագրական ազգագրության բնագավառում ոչ թե քաղաքի, այլ ամենից առաջ գյուղական այն ինտելիգենտներին ենք պարտական, որոնք ծնվելով և ապրելով ու աշխատելով գյուղական միջավայրում, բնականաբար էլ ավելի պետք է ծանոթ լինեին

իրենց հայրենի գավառի ու ընտանիքի նիստ ու կացին, քան քաղաքից դուրս գործուղվող աղքատ ազգագրագետները, որոնք շատ հաճախ Մուրացյանի «Առաքյալի» հերոսին են նմանվել:

Բազմաթիվ գավառներում աշխատող հայ ֆուկլորիստ բանահավաքները, ծրագրի ընտելացված ձեռքի տակ մեծ մասամբ աշխատել են առանց ցուցմունքների. ուստի թե՛ լույս տեսած և թե՛ ձեռագիր վիճակում գտնվող հավաքածուները իրենց վրա կրում են պատահականություն, շտապողականության և անսխառնության կնիքը: Մեր օրերում էլ թիչ չեն այնպիսիները, որոնք գավառական կյանքի պայմաններում կազմել են սովոր ժողովածուներ. այս ժողովածուները, սակայն, հազիվ կարելի լինի համարել ազգագրական անխառն նյութ: Այնտեղ կան վիպական տարրեր, ավելորդ դիալոգներ, բանաստեղծական զեղումներ, որոնց մեջ ազգային սովորությունները գրեթե խեղվում, կորչում են: Արտասահմանում լույս տեսած ազգագրական ու ֆուկլորային ժողովածուները նույնպես կազմված են անսխառն: Մյուս մեջ հաճախ նյութերն աղավաղված են և քմահաճորեն փոփոխված:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի կազմակերպման օրից պահանջ առաջացավ Պետ. Պատմական թանգարանի ազգագրական բաժնի աշխատողների կազմը ընդլայնել, որովհետև հնագիտության ու պատմության մեջ զանազան մութ հարցերի ճշգրիտ լուսաբանությունը հաճախ մենք գտնում ենք ազգագրական անթիվ ու անհամար նյութերի առկայության պայմաններում: Շատ հաճախ է պատահում, որ հնագետի համար անհասկանալի է դառնում նյութական կուլտուրայի այս կամ այն մնացորդը, մինչդեռ նրա այժմեական տիպը, լինի այն արհեստի, արվեստի, տեխնիկայի ու թե մարդաբանական տեսակետից, կենդանի կերպով ապրում է մեր ժողովրդի մեջ: Այսպիսի դեպքերում ազգագրական, ազգաբանական ու մարդաբանական տվյալներն են, որ պետք է թույլ տան վերծանել առեղծվածային համարվող պեղածո նյութերը: Իսկ այս տվյալները ճշգրտությամբ գրի առնելը միանգամայն անհնարին կլինեն առանց այն առաջնորդող ցուցմունքների, որոնք տրված են պրոֆ. Ստ. Լիսիցյանի «Հարցարան»-ում: Բնվող «Հարցարան»-ի արժեքը խիստ բարձր է այն առումով, որ նրա մեջ, ինչպես գրում է պրոֆ. Լիսիցյանը, հակառակ նախորդ ծրագրերի, տեղ են գտել «Այժմեական պայմանները նկատի առնող բաժիններ (օ-

րինակ՝ դասակարգային շերտավորման վերաբերյալ) և բազմաթիվ նոր հարցեր» (էջ՝ 6): Խոշոր նշանակություն են ստանում կոլլոսոզային գլուղի նոր կենցաղին ու հարաբերություններին հատկացված բազմաթիվ հարցերը, որոնց պատասխանները ամփոփ պատկեր կարող են ընձեռել նրա մասին: Հեղինակը «Հարցարան»-ում կոլլոսոզային կյանքին վերաբերող հարցերը չի ամփոփել «Հարցարան»-ի մի առանձին գլխում, նկատի ունենալով, որ կոլլոսոզային կենցաղը մեր ժողովրդի նոր կյանքն է, որ այդ նոր կյանքը մի նոր աստիճան է հին հասարակական ֆորմացիայից հետո, ուստի և կոլլոսոզային կյանքին վերաբերող հարցերը հանդես են գալիս «Հարցարան»-ի ընդհանուր խնդիրների հետ միասին:

«Հարցարան»-ի հեղինակը փորձից փմանալով, որ մեր ժողովրդական հավատալիքները սերտորեն կապակցված են ժողովրդի կյանքի հետ և բխում են նրանից, այս թեմային վերաբերող բազմաթիվ հարցերը կապել է ժողովրդի առօրյա հարաբերությունների հետ: Ծիշտ է, այս բանը չէր բացառված նաև Գր. Խալաթյանի «Մտադրում», բայց չափազանց քիչ էր և գրեթե թողնված էր մեծ մասամբ քանահավաքների հայեցողության:

Դիտական արժեքի տեսակետից ղեկավարել մեծ գուգահեռաբար հանդես եկող հավատալիքները փերին աստիճանի հետաքրքրական են: Նրանցով կարելի է միայն բացատրել, թե փ՛նչ չափով գերապրուկներ ունենք մեր կենցաղում նախնադարյան համայնական կյանքով ապրող մարդու կենցաղից, թե ի՛նչպիսի հետքեր կան անիմիզմից ու տոտեմիզմից և թե ի՛նչ նշանակություն ունի դրանց հասկանալն ընդհանրապես:

«Ազգագրական հարցարան»-ի հրապարակ գալը կարևոր նշանակություն է ստանում այս օրերին հենց այն պատճառով, որ Սըփյուռքի հայերը, ծագումով Հայաստանի բազմաթիվ գավառներից, այժմ տեղափոխվում են Սովետական Հայաստան և ապրում մեր տերիտորիայի վրա: Սրանք իրենց հատուկ նիստ ու կացն ունենալով ընկել են նորանոր միջավայրեր, որտեղ արագորեն փոփոխվել են սովորույթները, տեղ-տեղ կորցրել են իրենց ազգային դեմքը, փոխարենը վերցնելով նոր ապրելավայրերի ժողովուրդներից՝ հույներից, արաբներից, բուլղարներից, ռուսներից, եգիպտացիներից և այլն-նրանց սովորույթները, նիստ ու կացի որոշ կողմերը: Այժմ ամեն մի ազգագրագետի պարտականությունն է՝ առաջնորդվելով պրոֆ. Լի-

սիցյանի «Ազգագրական հարցարան»-ով գրի առնել մեր նորագույն ազգագրությունը, թե Սովետական Հայաստանում և թե Սփյուռքում:

Ինչպես նկատելի է, արտասահմանից ներգաղթող հայություն մի մասը դեռևս պահպանում է իր ազգային տարազը: Մեր պարտականությունն է ոչ միայն գրի առնել այդ տարազի նկարագիրը, այլև անհրաժեշտ է ձեռք բերել այն ու պահպանել մեր թանգարանում: Այս աշխատանքը կատարելիս ազգագրագետ բանահավաքները պիտի համոզվեն, որ պրոֆ. Լիսիցյանի «զգեստ ու զարդարանք» բաժինն իր հարցերով սպառիչ չէ, որ բանահավաքին է մնում դատել այն հարցերի մասին, որոնք բխում են ներկայացված ընդհանուր հարցերից:

Այժմ զգեստն ուսումնասիրելու ամենալավ ժամանակն է, որովհետև ներգաղթող հայերի մեջ ծերերի մոտ պահպանված քիչ թե շատ ազգային տարազը մեր կարգերում, շատ հասկանալի պատճառով, տեղի է տալու ժամանակակից երուպականացված տարազին: Եթե մենք գտնում ենք, որ զգեստները պետք է ուսումնասիրվեն այնպես, որ էվոլյուցիոն շղթայի բոլոր օղակները հնարավորությամբ սահմանենք մերականագնվեն, ապա մենք չենք կարող երևակայել, թե սոսկ քաղաքային զգեստներով կարելի է բավարարվել: Մեզ, ուրեմն, անհրաժեշտ է ունենալ ամենախիստ անկյուններում ապրող ժողովրդի, ինչպես և նորեկ հայերի, ամենահետամնաց զգեստներից սկսած մինչև զարգացման ներկա ձևերը հասած զգեստները: Պահեստների (գավառական և կենտրոնական թանգարաններ) համար գուցե ավելի կարելի է լինի գլուղից արդի պատրաստված զգեստների հավաքումն ու պահպանումը, որի վրա նորագույն քաղաքակրթության ազդեցությունը համեմատաբար նվազ է:

Ծիշտ այս ձևով պետք է վարվել նաև բնակարանը նկարագրելիս, որովհետև առանց ազգային ճարտարապետության պատմությունն իմանալու, առանց նախնական բնակարանների ձևերի ուսումնասիրման, չի կարող լինել հայ ճարտարապետության ճշգրիտ պատմություն: Բնակարանի ճիշտ, մանրազնին, բոլոր մանրամասների նկարագրմամբ, ինչպես նաև նրա հետ կապված բազմապիսի ոգիների ու տնային երբեմնի աստվածների ուսումնասիրմամբ գիտությունն փ միճակի է մասամբ հասկանալու մեր ժողովրդի ծագումը, նրա կուլտուրական կապը այլ և այլ ցեղերի հետ, և այլն: Այս է հետապնդում պրոֆ. Լիսիցյանի

հարցարարներ գրեթե բոլոր ուսումնասիրելիք խնդիրների ընադավառներում, թեև նրա մեջ, որտեղ խոսվում է ընակարանի մասին, հեղինակը դարձյալ շատ հարցեր թողնում է բանահավաքին, նրա մոտ կանխատեսելով աշխատանքի ինքնուրույնությունը:

«Հարցարան»-ում շատ անգամ դժվար է զանազանել, օրինակ «տուն» հասկացողությունը: Այնտեղ թեև չի ասված, թե «տուն» ասելով պետք է հասկանալ որոշ գավառներում:

1. Ընդհանրապես ամբողջ շենքը, որի հարկի տակ կան ախոռներ, փարախներ, թոնրատներ, օդաներ կամ տաքուներ և այլն,

2. «տուն», «թոնրատուն», «թնդըրտուն», «տան տուն»,

3. դերաստան, («իմ տունս ինձ լսում է մի մարդու պես», «իմ տունս նահապետական է», «մեր պապերի տունը...» և այլն և այլն), բայց բանահավաքը պետք է կռահի, բացահայտի, գտնի այն ամենը, ինչ որ յուրահատուկ է նկարագրվող օբեկտին:

Այսպես պետք է վարվել նաև «սաքու»-ն նկարագրելիս (սաքուն վանում նշանակում է ալգեմիջի, վրանանման-աշտարականման հովանոց, Ախալքալաքում և այլուր՝ մի տեսակ թախտ, հարակից օդային, որ Ախալքալաքում կոչվում է «սաքի»):

«Հարցարան»-ում շատ քիչ տեղ է հատկացված «գուշակություններ» բաժնին (էջ՝ 93), որի սահմաններում չի կարելի մնալ: Ազգագրագետ բանահավաքը պետք է այն

ընդլայնի, ելնելով այն հարցերից, որոնք ծագում են տեղի ու տեղը դրի առնելու ժամանակ:

Սրանով միայն կարելի է հասնել այն նըպատակին, որին ձգտել և ձգտում է հայ ազգագրությունը՝ Սովետական Միության ժողովուրդների մեծ ընտանիքում ի ցույց հանելու իր ազգային մեծ ու դարավոր կուլտուրան: Այս փորձում մեծ անելիքներ ունի մեր գյուղական ինտելիգենցիան, որովհետև նա է մոտ կանգնած մեր գյուղական կյանքին: Մեծ են նաև դավառական թանգարանների անելիքները, որոնք պետք է ստեղծեն ազգագրական բաժիններ և հարցարանի ցուցմունքների համաձայն առաջին հերթին հավաքեն նոր կուլտուրայի ներարշավի շնորհիվ մեր կենցաղից դուրս վանվող նյութական կուլտուրայի նմուշները՝ ամաններ, զրգեստներ, զարդեր, ձեռագործներ, զանազան արհեստներին վերաբերող գործիքներ ու նյութեր, ձիասարքեր, երկրագործական գործիքներ և այլն:

Բանահավաքները պետք է զարկ տան հայ հին ու նոր ֆոլկլորի հավաքման գործին, առաջնորդվելով պրոֆ. Լիսիցյանի հարցարանի համապատասխան ցուցմունքներով:

Սրանով մենք կատարած կլինենք «Հարցարան»-ի ծերունազարդ, բաղմավաստակ գիտնական, պրոֆեսոր Ստեփան Լիսիցյանի բաղձանքը և հայ ազգագրության պահանջը:

Վ. ԲԴՈՅԱՆ

